Ազատան

Ազատան բնակավայրի վարչական տարածքը կազմում է 3856.87, բնակչությունը 5343 մարդ

Գտնվում է մարզկենտրոնից 8 կմ հարավ, մայրաքաղաքից 110 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1490 մ է: Ազատանն ունի բարեխառն լեռնային կլիմա: Ձմեռները ցուրտ են և տևական: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են և համեմատաբար խոնավ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղի շրջակայքում կան ավազի, բազալտի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Շիրակի ջրանցքի ջրերով: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են պտղաբուծությանբ, հացահատիկային, բանջարաբոստանային, կերայինկուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությանբ և անասնապահությամբ: Համայնքում կան երկու եկեղեցիներ՝ Հայ Առաքելական և Կաթողիկե, որոնք վերանորոգվել և դարձել են գործող եկեղեցիներ: Բնակավայրում գործում է հանրակրթական դպրոց, արվեստի դպրոց, մարզադպրոց, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, մանկապարտեզ, ինչպես նաև «Ազատան համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպությունը: